ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 18.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/33

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.07.2017թ. թիվ 03/27-1/13481-17 գրությամբ «Սեյսմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 07.07.2017թ. թիվ 01/61-13064 գրության հիման վրա, 24.07.2017թ. թիվ 03/27-1/13481-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Սեյսմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Սեյսմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ի պատասխան ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի 26.07.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/13592-17 գրության՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ն 31.07.2017թ. թիվ 07-17/171 գրությամբ հայտնել է, որ 21.02.2017թ. «Սեյսմշին» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագիրը Երևանի քաղաքապետարանը 06.07.2017թ. թիվ 6-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծելը կատարել է զգալի շեղումներով, մասնավորապես՝ պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության շրջայցերի ժամանակ 29.06.2017թ. կազմված N 13 ՏՀ արձանագրությունը իրականությանը չի համապատասխանում, մասնավորապես՝ նշված խախտումները առկա չեն եղել, ինչի հիմնա վրա 06.07.2017թ. «Սեյսմշին» ՍՊԸ-ն N 07-17/162 գրությամբ տեղյակ է պահել Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչությանը, սակայն պատասխան չի ստացել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 31.07.2017թ. ժամը 11:00-ի, 04.08.2017թ. ժամը 11:30-ի և 11.08.2017թ. ժամը 11:15-ի նիստերի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր մասնակցությունը, ով պնդել է 31.07.2017թ. թիվ 07-17/171 գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.07.2017թ. թիվ 01/61-13064 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման ու պահպանման աշխատանքների որակի

տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է «Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ»:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

Վերը նշված կետի համաձայն՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆիանանսական վարչության աշխատակիցների կողմից 06.04.2017 թվականին կատարված շրջայցերի արդյունքում հայտնաբերվել է, որ Կատարողը խախտել է N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների պայմանները, այն է՝ Կատարողը չի ապահովել (6-րդ չափաբաժնի մասով) տեխ. հսկիչի մշտական ներկայությունը շինարարական օբյեկտում, ինչպես նաև վերը նշված շրջայցերի ընթացքում արձանագրվել է նաև այլ պայմանգրային խախտում, որի վերաբերյալ կազմված համապատասխան արձանագրությունը աշխատակազմի ֆինանսական վարչության պետի կողմից 06.04.2017 թվականի N 09/1482 գրությամբ տրամադրվել է Կատարողին:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերը նշված ստորաբաժանման աշխատակիցների կողմից 29.06.2017 թվականին կատարված շրջայցերի արդյունքում հայտնաբերվել է, որ Կատարողը կրկին խախտել է N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների պայմանները, այն է՝ Կատարողը չի ապահովել (6-րդ չափաբաժնի մասով) տեխ. հսկիչի մշտական ներկայությունը շինարարական օբյեկտում, ինչպես նաև վերը նշված շրջայցերի ընթացքում արձանագրվել է այլ պայմանգրային խախտում, որի վերաբերյալ կազմված

համապատասխան արձանագրությունը էլեկտրոնային փոստով տրամադրվել է Կատարողին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով»:

Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը առաջարկել է Կատարողին Պայմանագիրը՝ 6-րդ չափաբաժնի մասով, միակողմանի լուծելու

վերաբերյալ գրությունը, որը նաև օրենսդրական պահանջի համաձայն՝ հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում, ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 5.2 կետով հաշվարկված տույժը՝ 1490 << դրամ, որը հարկավոր է փոխանցել << ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900015211429 հաշվեհամարին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 04.08.2017թ. ժամը 11:30-ի և 11.08.2017թ. ժամը 11:15-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են 07.07.2017թ. թիվ 01/61-13064 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/33 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/33 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ն) ստանձնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման ու պահպանման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավությունը համաձայն՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

3. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանվել է շինարարության ողջ ընթացքում օբյեկտում տեխ. հսկիչի մշտական ներկայությունը ապահովելու պարտականությունը:

4. Պատվիրատուի կողմից 06.04.2017թ. կազմված թիվ 04ՏՀ արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում, 06.04.2017թ. ժամը 14:30-ի դրությամբ Գ. Նժդեհի 2, 4 և Բագրատունյաց 19, 21 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական հսկողը ներկա չի գտնվել և տեխնիկական հսկողություն չի իրականացվել, ինչպես նաև չի ստուգվել իրականացված աշխատանքների համապատասխանությունը: Ներկաների հավաստմամբ տեխնիկական հսկողություն չի իրականացվել աշխատանքների սկսման պահից:

5. «Սեյսմշին» ՍՊԸ-ին ուղղված 06.04.2017թ. թիվ 09/1482 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ Պատվիրատուի և Ընկերության միջև կնքված Պայմանագրի 2.1.1 ենթակետի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատակիցները 06.04.2017թ. կատարած շրջայցի (Գ. Նժդեհի 2, 4 և Բագրատունյաց 19, 21 շենքերի բակերի հիմնանորոգում և Արաբկիրի հ. 26 մանկապարտեզի հիմնանորոգում) շրջանակներում ստուգել են Ընկերության կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը: Ստուգման ընթացքում պարզվել է, որ Ընկերության կողմից պատշաճ կերպով չեն կատարվել Պայմանագրի հավելված 1-ի 3-րդ կետի 16-րդ ենթակետով (շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխհսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում) ամրագրված պարտականությունները:

Վերը նշված գրությամբ Երևանի քաղաքապետարանը Ընկերությանը նախազգուշացրել է, որ նշված խախտումը կրկնվելու դեպքում Ընկերության նկատմամբ կկիրառվեն Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետով նախատեսված միջոցները՝ կից ներկայացնելով ստուգման վերաբերյալ արձանագրությունը:

6. Պատվիրատուի կողմից 29.06.2017թ. կազմված թիվ 13ՏՀ արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում, 29.06.2017թ. ժամը 12:10-ի դրությամբ Գ. Նժդեհի 2, 4 և Բագրատունյաց 19, 21 շենքերի

բակերի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական հսկողը ներկա չի գտնվել և տեխնիկական հսկողություն չի իրականացվել:

Ընդ որում տեղադրված եզրաքարերը չէին համապատասխանում ծավալաթերթով նախատեսված եզրաքարերին (բազալտե եզրաքարերի փոխարեն տեղադրված էին բետոնե եզրաքարեր):

7. «Սեյսմշին» ՍՊԸ-ին ուղղված 06.07.2017թ. թիվ 61/726 գրությամբ Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը Պայմանագիրը՝ 6-րդ չափաբաժնի (Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման ու պահպանման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն) մասով միակողմանի լուծելու վերաբերյալ և նշված ծանուցումը հրապարակել է www.gnumner.am համացանցային կայքում:

8. Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչությանն ուղղված 06.07.2017թ. թիվ 07-17/162 գրությամբ «Սեյսմշին» ՍՊԸ-ն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ 29.06.2017թ. Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից կատարված ստուգումների արդյունքում կազմված N 13ՏՀ արձանագրությունը չի համապատասխանում իրականությանը, մասնավորապես՝ տեխնիկական հսկիչը գտնվել է շին. հրապարակում, որտեղ այդ ժամանակ իրականացվել են ճեմապատման, բետոնե սալիկների տեղադրման և եռակցման աշխատանքներ: Իսկ Պատվիրատուի այն դիտարկմանը, որ տեղադրված եզրաքարերը չեն համապատասխանում նախագծային լուծումներին (բազալտե եզրաքարերի փոխարեն տեղադրված են բետոնե եզրաքարեր) Ընկերությունը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «ԼԵՎ» ՍՊԸ-ի միջև 14.02.2017թ. կնքված N «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/17-4» աշխատանքների կատարման պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով՝ ծավալաթերթ նախահաշվով, և աշխատանքային նախագծով բազալտե եզրաքարեր նախատեսված չեն եղել:

Ամփոփելով վերոշարադրվածը, Ընկերությունը պահանջել է չեղյալ համարել 29.06.2017թ. կազմված N 13ՏՀ արձանագրությունը՝ կից ներկայացնելով Երևանի քաղաքապետարանի և «ԼԵՎ» ՍՊԸ-ի միջև 14.02.2017թ. կնքված N «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/17-

4» աշխատանքների կատարման պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ը՝ ծավալաթերթ նախահաշիվը և 29.06.2017թ. կազմված N 13 ՏՀ արձանագրությունը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.07.2017թ. թիվ 03/27-1/13481-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 07.07.2017թ. թիվ 01/61-13064 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ*** (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) ***կատարելը»***:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ն) ստանձնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման ու պահպանման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված է, որ ***տեխնիկական հսկողությունն իրականացնողը պարտավոր է շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում:***

Պատվիրատուի կողմից 06.04.2017թ. կազմված թիվ 04ՏՀ արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում, 06.04.2017թ. ժամը 14:30-ի դրությամբ Գ. Նժդեհի 2, 4 և Բագրատունյաց 19, 21 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական հսկողը ներկա չի գտնվել և տեխնիկական հսկողություն չի իրականացվել, ինչպես նաև չի ստուգվել իրականացված աշխատանքների համապատասխանությունը: Ներկաների հավաստմամբ տեխնիկական հսկողություն չի իրականացվել աշխատանքների սկսման պահից:

Երևանի քաղաքապետարանը 06.04.2017թ. թիվ 09/1482 գրությամբ Ընկերությանը հայտնել է արձանագրված խախտման մասին՝ կից ներկայացնելով կազմված արձանագրությունը և նախազգուշացրել, որ նշված խախտումը կրկնվելու դեպքում Ընկերության նկատմամբ կկիրառվեն Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետով նախատեսված միջոցները:

Պատվիրատուի կողմից 29.06.2017թ. կազմված թիվ 13ՏՀ արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում, 29.06.2017թ. ժամը 12:10-ի դրությամբ Գ. Նժդեհի 2, 4 և Բագրատունյաց 19, 21 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական հսկողը ներկա չի գտնվել և տեխնիկական հսկողություն չի իրականացվել:

Ընդ որում տեղադրված եզրաքարերը չէին համապատասխանում ծավալաթերթով նախատեսված եզրաքարերին (բազալտե եզրաքարերի փոխարեն տեղադրված էին բետոնե եզրաքարեր):

«Սեյսմշին» ՍՊԸ-ին ուղղված 06.07.2017թ. թիվ 61/726 գրությամբ Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը Պայմանագիրը՝ 6-րդ չափաբաժնի (Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման ու պահպանման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն) մասով միակողմանի լուծելու վերաբերյալ և նշված ծանուցումը հրապարակել է www.gnumner.am համացանցային կայքում:

Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչությանն ուղղված 06.07.2017թ. թիվ 07-17/162 գրությամբ «Սեյսմշին» ՍՊԸ-ն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ 29.06.2017թ. Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից կատարված ստուգումների արդյունքում կազմված N 13 ՏՀ արձանագրությունը չի համապատասխանում իրականությանը, մասնավորապես՝ տեխնիկական հսկիչը գտնվել է շին. հրապարակում, որտեղ այդ ժամանակ իրականացվել են ճեմապատման, բետոնե սալիկների տեղադրման և եռակցման աշխատանքներ: Իսկ Պատվիրատուի այն դիտարկմանը, որ տեղադրված եզրաքարերը չեն համապատասխանում նախագծային լուծումներին (բազալտե եզրաքարերի փոխարեն տեղադրված են բետոնե եզրաքարեր) Ընկերությունը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «ԼԵՎ» ՍՊԸ-ի միջև 14.02.2017թ. կնքված N «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/17-4» աշխատանքների կատարման պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-

ով՝ ծավալաթերթ նախահաշվով, և աշխատանքային նախագծով բազալտե եզրաքարեր նախատեսված չեն եղել:

Ամփոփելով վերոշարադրվածը, Ընկերությունը պահանջել է չեղյալ համարել 29.06.2017թ. կազմված N 13 ՏՀ արձանագրությունը՝ կից ներկայացնելով Երևանի քաղաքապետարանի և «ԼԵՎ» ՍՊԸ-ի միջև 14.02.2017թ. կնքված N «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/17-4» աշխատանքների կատարման պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ը՝ ծավալաթերթ նախահաշիվը և 29.06.2017թ. կազմված N 13 ՏՀ արձանագրությունը:

Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայամանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից 06.04.2017թ. կազմված թիվ 04ՏՀ և 29.06.2017թ. կազմված թիվ 13ՏՀ արձանագրությունները՝ որոնցով արձանագրվել են, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ն խախտել է N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների պայմանները, այն է՝ Ընկերությունը չի ապահովել (6-րդ չափաբաժնի մասով) տեխ. հսկիչի մշտական ներկայությունը շինարարական օբյեկտում, ստորագրվել են միայն Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից:

Հաշվի առնելով, որ վերը նշված արձանագրությունները ստորագրվել են միայն Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից, ուստի Խորհուրդը գտնում է, որ նշված արձանագրությունների՝ Պայմանագրի մի կողմի ներկայացուցիչների կողմից ստորագրված լինելու փաստը չի կարող բավարար հիմք հանդիսանալ խախտումն արձանագրելու համար:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը***:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Սեյսմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, գտնում է, որ Ընկերությունը թույլ չի տվել Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 21.02.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 24.07.2017թ. թիվ 03/27-1/13481-17 գրությամբ «Սեյսմշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04227903) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ